ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 14.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/17

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) հիմք ընդունելով «Խաչհար» ՍՊԸ-ի կողմից 10.07.2017թ. ներկայացված՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից կազմակերպված «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2017թ. ժամը 15:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի «ա» ենթակետով «Ճանապարհ» ՍՊԸ-ի և «Սուարդի» ԲԸ-ի հայտերը բավարար գնահատելու և նույն արձանագրության 2-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ «Ճանապարհ» ՍՊԸ-ին առաջին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումները (առաջին չափաբաժնի մասով կայացրած բոլոր որոշումները) և «Ճանապարհ» ՍՊԸ-ի հետ առաջին չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելու, իսկ այլ մասնակցի հետ պայմանագիր կնքած լինելու դեպքում՝ ընթացակարգը չկայացած հայտարարելու պահանջների մասին բողոքը և հաշվի առնելով Խորհրդին ուղղված՝ ԳԲԽ-ԱՄ-2017/17 բողոքն առանց քննության թողնելու մասին «Խաչհար» ՍՊԸ-ի 11.07.2017թ. գրությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 21.04.2017թ. «Հայաստանի Հանրապետության

գնումների բողոքարկման խորհրդի գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 1 որոշման 45-րդ կետի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչհար» ՍՊԸ-ի կողմից 10.07.2017թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ